

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, ավազանի անունով Քաչիկ, ծնվել է 1925 թվականի դեկտեմբերի 25-ին, Հայկական ՍՍՌ-ի Եղեգնաձորի շրջանի Եղեգիս գյուղում, գյուղացու ընտանիքում։ Մնողները՝ Հմայակ և Աստղիկ, եղել են միջակ տնտեսատերեր և զբաղվել են հողագործությամբ։

Քաչիկը մինչև 8-րդ դասարանը սովորել է Եղեգիս գյուղում, այնուհետև տեղափոխվել է Երևան և ավարտել է տասնամյա ուսումը։

1945 թվականին Քաչիկն ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը և 1950 թվականին այն ավարտել հաջողությամբ։

1950—1953 թվականներին, լուսահոգի Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի կարգադրությամբ, սովորել է Մոսկվայի Ռուսական Հոգևոր Ակադեմիայում, Զագորսկի վանքում։

1953—1954 թվականներին Մոսկվայում, պրոֆ. Հ. Կուսիկյանի ղեկավարությամբ, զբաղվել է հայագիտությամբ և պատմագիտությամբ։

1948 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1954 թվականին՝ կուսակրոն քահանա, ձեռամբ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի։ 1956 թվականին ստացել է վարդապետական աստիճան Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից։

1956 թվականի օգոստոսի 1-ին նշանակվել է Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ և այս պաշտոնի մեջ էլ այժմ գտնվում է։

1956-ին և 1961-ին ուղեկցել է Վեհափառ Հայրապետին իբրև գավազանակիր, դեպի Միջին-Արևելք և Թուրքիա հայրապետական ճանապարհորդությունների առթիվ։

Գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը Մայր Աթոռի երիտասարդ և խոստումնալից միաբաններից է։

Սրբազանը պատմա-բանասիրական հոդվածներով միշտ իր աշխատակցությունն է բերել «Էջմիածին» ամսագրին։

Վստահ ենք, որ Տ. Պարգև եպիսկոպոսը կարդարացնի Վեհափառ Հայրապետի վստահությունը իր գործունեությամբ և իր բոլորանվեր ծառայությամբ, որպես երիտասարդ ուժ Վեհափառ Հայրապետի կողքին։